| Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը | Տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշիվների անվանումը | | Նախահաշվի գումարը | Նախահաշվի գումարը | Նախատեսված գումարը |
| **Գրասենյակային նյութեր և հագուստ** | | **426100** | **8,400.00** | **6,800.00** | **6,756.90** |
| | *Գրասենյակային պիտույքներ* | *426110* | 400.00 | 350.00 | *322.30* |
| | *Հագուստ և համազգեստ* | *426120* | 8,000.00 | 6,450.00 | *6,434.60* |
| **Տրանսպորտային նյութեր** | | **426400** | **2,900.00** | **2,750.00** | **2,746.00** |
| | *Վառելիքի ծախսեր* | *426410* | 2,750.00 | 2,750.00 | *2,746.00* |
| | *Այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար* | *426490* | 150.00 | - | - |
| **Առողջապահական և լաբորատոր նյութեր** | | **426600** | **2,600.00** | **2,300.00** | **2,275.70** |
| | *Բժշկական քննությունների նյութեր* | *426610* | 2,600.00 | 2,300.00 | *2,275.70* |
| **Կենցաղային և հանրային սննդի նյութեր** | | **426700** | **9,600.00** | **7,600.00** | **7,475.00** |
| | *Կենցաղային նյութեր (Մաքրիչ և հիգենիկ նյութեր)* | *426710* | 9,600.00 | 7,600.00 | *7,475.00* |
| | *Հանրային սննդի նյութեր (Ծխախոտ)* | *426720* | - | - | - |
| | *Կենցաղային այլ նյութեր (Տնտեսական նյութեր ապրանքներ)* | *426730* | - | - | - |
| **Պարտադիր վճարներ** | | **482300** | 482.00 | 438.00 | **437.50** |
| | *Այլ պարտադիր վճարներ* | *482350* | **482.00** | **438.00** | *437.50* |
| **Այլ ծախսեր** | | **486100** | 960.00 | 100.00 | *98.30* |
| | *Այլ ծախսեր* | *486110* | **960.00** | **100.00** | *98.30* |
| | **2022թ փաստացի ֆինանսավորում** | | | | **236,543.73** |
| | **ՀՀ պետական բյուջե վերադարձման գումարը** | | | | **788.00** |

Փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը հաստատվել է 2023թ. մայիսի 19-ին:

Աննա Եղիազարյան — Գլխավոր քարտուղար

Մարիամ Կնյազյան — Գլխավոր հաշվապահ

Սույն հաշվետվությունը պետք է ընթերցվի այս հաշվետվության բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 11-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությանը կից ծանոթագրություններ

## 1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) իր գործունեությունը ծավալում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

1993թ.-ին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով ճանաչվեց որպես կամավորության սկզբունքով գործող, Կարմիր խաչի ազգային միակ, անկախ և ինքնավար ընկերություն, որը համագործակցում է հանրապետության իշխանությունների հետ մարդասիրական հարցերում և որն իրականացնում է իր գործունեությունը Կարմիր խաչի և Կարմիր մահիկի շարժման հիմնարար սկզբունքներին համապատասխան: Կազմակերպությունը Պետական ռեգիստրի կողմից գրանցվել է 2003թ. հուլիսի 31-ին:

Կամակերպության գործունեության հիմնական ռազմավարական ուղղություններն են.

- Աղետների կառավարում
- Բնակչության տեղաշարժ
- Առաջին օգնություն
- Որոնում ծառայություն
- Սոցիալ-առողջապահություն
- Երիտասարդների հիմնախնդիրներին արձագանք
- Մարդասիրական արժեքների տարածում:

Կազմակերպությունը 2020թ. մայիսի 1-ից իրականացրել է «Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագիրը (Ծրագիր) Գյումրու շուրջօրյա խնամքի հաստատությունում, որը ֆինանսավորում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի №1919-Ն որոշումը (ՀՀ Կառավարության 2020թ. ապրիլի 23-ի № 628-Ն որոշման խմբագրությամբ) և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Կազմակերպության միջև 2019թ. դեկտեմբերի 18-ին կնքված հուշագիրը:

Դրամաշնորհը տրամադրվել է խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց Գյումրու շուրջօրյա խնամքի հաստատությունում կացարանով ապահովման, շուրջօրյա խնամք և սոցիալական այլ ծառայությունների ապահովման նպատակով: Դրամաշնորհի գումարը հաշվարկվում է շահառուներին օրենքով սահմանված կարգով շուրջօրյա խնամքի և անհրաժեշտ այլ ծառայությունների լիարժեք մատուցման համար: Կազմակերպությունն իրականացնում է 160 շահառուի խնամք:

Ծրագրի շրջանակներում Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումները ներառում են.

- Խնամքի շուրջօրյա ծառայություններ ստացող տարեցների և հաշմանդամություն ունեող 18 տարին լրացած անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը,
- Նրանց սոցիալ-հոգեբանական ու բժշկական օնգության կազմակերպումը,
- Խնամքի իրականացումը,

- Սննդով, հագուստով, անկողնային պարագաներով և անհրաժեշտ այլ կենցաղային իրերով ապահովումը,
- Ազատ ժամանցի և մշակութային միջոցառումների կազմակերպումը:

Պայմանագիրը գործում է 2020թ. մայիսի 1-ից, 2022թ. փետրվարի 15-ին կնքված Համաձայնագիր № 1-ով պայմանագրի գործողության ժամկետն երկարաձգվել է մինչև 2022թ.դեկտեմբերի 31-ը:

Ծրագրի ակնկալվող արդյունքներն են.

- Ապահովել խնամվող անձանց ընտանեկանին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմաններ,
- Գնահատել շահառուի անհատական սոցիալական կարիքները և մշակել սոցիալական վերականգնման անհատական ծրագիր,
- Խնամվող անձանց ապահովել անհրաժեշտ կենցաղային գույքով, տարիքաեռային առանձնահատկություններին և եղանակային պայմաններին համապատասխան հագուստով, կոշկեղենով, անկողնային պարագաներով, ինչպես նաև անձնական հիգիենայի պարագաներով,
- Կազմակերպել խնամվող անձանց օրը առնվազն երեք անգամյա սննդի (հատուկ սննդակարգի կարիք ունեցողների համար՝ դիետիկ սննդի) տրամադրումը,
- Կազմակերպել խնամվող անձանց սոցիալ-հոգեբանական օգնության, իրավաբանական խորհրդատվության տրամադրումը,
- Կազմակերպել խնամվող անձանց առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը անհրաժեշտության դեպքում՝ հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն ուղղորդումը;
- Ապահովել ընտանիքի, բարեկամների, ընկերների հետ շահառուի կապը,
- Սոցիալ-հոգեբանական աշխատանք տանել ընտանիքի հետ (առկայության դեպքում)՝ շահառուի վերադարձը ընտանիք կազմակերպելու համար,
- Կազմակերպել խնամվող անձանց պրոթեզավորթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովումը, բժշկասոցիալական փորձաքննությունը,
- Կազմակերպել խնամվող անձանց ազատ ժամանցը և զբաղվածությունը՝ ըստ նրանց նախասիրությունների, ինչպես նաև մասնակցությունը համայնքային կյանքում՝ նպաստելով նրանց ակտիվ երկարակեցությանը,
- Ապահովել տուն-ինտերնատի տարածքում անհրաժեշտ սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների իրականացումը,
- Կազմակերպել մահացած խնամվողների հուղարկավորությունը՝ խնամվողի հարազատների բացակայության կամ հուղարկավորությունը կազմակերպելուց նրանց հրաժարվելու կամ խնամվողի մահվան օրվանից երկու օրվա ընթացքում հուղարկավորությունն իրենց կողմից կազմակերպելու մտադրության մասին չհայտնելու դեպքում,
- Օրենքով չարգելված այլ ծառայությունների տրամադրում:

Ծրագրի իրականացման մեջ ներգրավված Կազմակերպության աշխատակիցների քանակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 74 մարդ:

Կազմակերպության գրանցված և գործունեության հասցեն է ՀՀ, ք. Երևան, 0015, Պարոնյան 21/1 շենք:

## 2 Էական հաշվապահական քաղաքականություն

### 2.1 Համապատասխանություն

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի համաձայն: Հաշվապահական հաշվառման այս հիմունքի շրջանակներում ֆինանսավորումը ճանաչվում է ստացման պահին, իսկ ծախսերը՝ ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման պահին՝ հավաստող փաստաթղթի հիման վրա՝ անկախ վճարումից: Սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացվել են 2022թ.դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

### 2.2 Գործառնական և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Կազմակերպության գործառնական արժույթը:

Սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների համար:

## 3 Ստացված ֆինանսավորում

2020թ. ապրիլի 23-ին կնքված № ԴՏՊ – Ծ1032.Մ11001/20-3/1 դրամաշնորհային պայմանագրի և դրա 2022թ. փետրվարի 15-ին կնքված Համաձայնագիր № 1-ի շրջանակներում «Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի իրականացման համար հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպությունը ստացել է 236,543.7 հազար դրամ ֆինանսավորում:

## 4 Կանխիկի մնացորդ

Կազմակերպությունը Ծրագրի մասով սկզբնական մնացորդը 3,023.9 հազար դրամի չափով վերադարձվել է պատվիրատուի հաշվեհամարին 2022թ. հունվար 20-ին: Հաշվետու ամսաթվի դրությամբ դրամաշնորհային պայմանագրի շրջանակներում չծախսված և պետությանը հետ վերադարձի ենթակա գումարի մնացորդը կազմել է 788.0 հազար դրամ, որը վերադարձվել է պատվիրատուի հաշվեհամարին 2023թ. հունվարի 31-ին:

# ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի կողմից տրամադրվող և պետության կողմից համաֆինանսավորվող դրամաշնորհի ֆինանսական հաշվետվություն և Անկախ աուդիտորի եզրակացություն

## «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ծրագրերի հզորացում» ծրագիր

**Դրամաշնորհի հատկացման պայմանագիր**

**№ ARM-C-MOH-ARCS-2021/4-2022 առ 1 հոկտեմբերի 2021թ. և Համաձայնագիր 1 № ARM-C-MOH-ARCS-2021/4-2022 առ 22 հունիսի 2022թ.**

## «Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» հասարակական կազմակերպություն

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

# Բովանդակություն


Անկախ աուդիտորի եզրակացություն 3

Դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվություն 6

Ծրագրի ֆինանսական հաշվետվությանը կից ծանոթագրություններ 8

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորիչ 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armei
T + 374 10 50 09 64/61

# Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» հասարակական կազմակերպության խորհրդին

*Կարծիք*

Մենք աուդիտ ենք ենթարկել «Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» հասարակական կազմակերպության (Կազմակերպություն) կողմից իրականացված ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի կողմից տրամադրվող և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից համաֆինանսավորվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ծրագրերի հզորացում» ծրագրի դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությունը՝ 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար, ինչպես նաև դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությանը կից ծանոթագրությունները (Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ):

Մեր կարծիքով, կից Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի դրամական միջոցների մնացորդները՝ 2022թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև դրամական միջոցների մուտքերն ու վճարումները նույն ամսաթվին ավարտված տարվա համար՝ համաձայն դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությանը կից թիվ 2 ծանոթագրությունում նկարագրված հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի պահանջների:

*Կարծիքի հիմք*

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն:

Grant Thornton

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար

*Հանգամանքի շեշտադրում. Հաշվապահական հաշվառման հիմունք*

Մենք ուշադրություն ենք հրավիրում դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությանը կից թիվ 2 ծանոթագրությանը, որտեղ նկարագրվում է հաշվապահական հաշվառման հիմունքը: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2021թ. հոկտեմբերի 1-ին կնքված № ARM-C-MOH-ARCS-2021/4-2022 դրամաշնորհային պայմանագրի և այդ պայմանագրի 2022թ. հունիսի 22-ին կնքված Համաձայնագիր 1-ի շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը տեղեկատվություն տրամադրելու նպատակով: Ուստի այս Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող օգտագործվել մեկ այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

*Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությանը կից թիվ 2 ծանոթագրությունում նկարագրված հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի համաձայն: Պատասխանատվության շրջանակները ներառում են նաև ղեկավարության որոշումը տվյալ պայմաններում Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի կիրառելի լինելու, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի պատճառով էական խեղաթյուրումներից զերծ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակերպությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

*Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ Ծրագրի ֆինանսական հաշվետվություններն ամբողջությամբ վերցրած զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի պատճառով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ այդ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Grant Thornton

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի պատճառով Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար .
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել Ծրագրի ֆինանսական հաշվետվության կից բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը.
- գնահատում ենք Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

| | |
|---|---|
| Արմեն Հովհաննիսյան | Էմիլ Վասիլյան |
| Տնօրեն | Առաջադրանքի պատասխանատու |
| 22 մայիսի 2023թ. | |

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569

# Դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվություն

| Պայմանագիր № ARM-C-MOH-ARCS-2021/4-2022<br>01/01/2022-31/12/2022<br>ՀՀ դրամ | | | Ընդամենը բյուջե՝ դրամաշնորհային միջոցներ | Ընդամենը բյուջե՝ պետական բյուջեից համաֆինանսավորում | Ընդհանուր ծախսեր՝ դրամաշնորհային միջոցներ | Ընդհանուր ծախսեր՝ պետական բյուջեից համաֆինանսավորում | Մնացորդ՝ դրամաշնորհային միջոցներ | Մնացորդ՝ պետական բյուջեից համաֆինանսավորում |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| N | Բյուջե տող | Նկարագիր | | | | | | |
| Սկզբնական մնացորդ | | | | | 678,027.20 | 1,314.80 | | |
| Ստացված ֆինանսավորում (ներառյալ հաշվեգրված տոկոսային եկամուտը) | | | | | 40,746,013.90 | 160,009.80 | | |
| Կատարված ծախսեր | | | | | | | | |
| 1 | 96 | ՏԲ հիվանդներին հոգեբանական աջակցության տրամադրում | 13,984,114.00 | - | 13,548,583.60 | - | 435,530.40 | - |
| 2 | 163 | Աշխատանքային ռեսուրսներ/վարչական անձնակազմ | 3,312,000.00 | - | 3,306,319.00 | - | 5,681.00 | - |
| 3 | 164 | Տրանսպորտային ծախսեր | 8,483,000.00 | - | 5,179,829.40 | - | 3,303,170.60 | - |
| 4 | 166 | ՏԲ հիվանդների և նրանց ընտանիքի անդամների համար դասընթացներ/հանդիպումներ | 700,000.00 | - | 761,994.80 | - | (61,994.80) | - |
| 5 | 10 | Կամավորների վերապատրաստումներ | 250,000.00 | - | 245,864.00 | - | 4,136.00 | - |
| 6 | 12 | Հանրային իրազեկում/տպագրական աշխատանքներ | 2,670,000.00 | - | 2,670,100.00 | - | (100.00) | - |
| 7 | 19 | Սոցիալական աջակցություն/սննդային փաթեթներ ծրագրի շահառուներին | 1,801,500.00 | - | 1,801,125.00 | - | 375.00 | - |
| 8 | 20 | Սոցիալական աշխատանքների համակարգող | 2,220,000.00 | - | 2,741,005.00 | - | (521,005.00) | - |
| 9 | 21 | Սոցիալական աշխատողների տրանսպորտային ծախսերի հատուցում | 3,960,000.00 | - | 4,404,600.00 | - | (444,600.00) | - |
| 10 | 22 | Հեռախոսակապի ծառայություններ | 682,500.00 | - | 625,500.00 | - | 57,000.00 | - |
| 11 | 43 | Աշխատանքային ռեսուրսներ | 1,200,000.00 | - | 1,349,490.00 | - | (149,490.00) | - |

| Պայմանագիր № ARM-C-MOH-ARCS-2021/4-2022<br>01/01/2022-31/12/2022<br>ՀՀ դրամ | | | Ընդամենը բյուջե՝ դրամաշնորհային միջոցներ | Ընդամենը բյուջե՝ պետական բյուջեից համաֆինանսավորում | Ընդհանուր ծախսեր՝ դրամաշնորհային միջոցներ | Ընդհանուր ծախսեր՝ պետական բյուջեից համաֆինանսավորում | Մնացորդ՝ դրամաշնորհային միջոցներ | Մնացորդ՝ պետական բյուջեից համաֆինանսավորում |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| N | Բյուջե տող | Նկարագիր | | | | | | |
| 12 | 76 | Վարչական ծախսեր | 2,146,416.00 | 200,000.00 | 2,145,517.00 | 160,000.00 | 899.00 | 40,000.00 |
| **Ընդամենը** | | | **41,409,530.00**[1] | **200,000.00** | **38,779,927.80** | **160,000.00** | **2,629,602.20** | **40,000.00** |
| **Վերջնական մնացորդ** | | | | | **2,644,113.30** | **1,324.60** | | |

Դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությունը հաստատվել է 2023թ. մայիսի 22-ին:

Աննա Եղիազարյան — Մարիամ Կնյազյան

Գլխավոր քարտուղար — Գլխավոր հաշվապահ

Սույն ֆինանսական հաշվետվությունը պետք է ընթերցվի այս հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 10-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

[1] Դրամաշնորհային պայմանագրի իրականացման ժամանակաշրջանը ներառում է 2021թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր բյուջեն կազմում է 47,251,620 ՀՀ դրամ, որից 2021թ. 4րդ եռամսյակին փաստացի ծախսվել է 5,842,090 ՀՀ դրամ: Արդյունքում 2022թ. տեղափոխված բյուջեն կազմել է 41,409,530 ՀՀ դրամ:

# Ծրագրի ֆինանսական հաշվետվությանը կից ծանոթագրություններ

## 1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) իր գործունեությունը ծավալում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

1993թ.-ին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով ճանաչվեց որպես կամավորության սկզբունքով գործող, Կարմիր խաչի ազգային միակ, անկախ և ինքնավար ընկերություն, որը համագործակցում է հանրապետության իշխանությունների հետ մարդասիրական հարցերում և որն իրականացնում է իր գործունեությունը Կարմիր խաչի և Կարմիր մահիկի շարժման հիմնարար սկզբունքներին համապատասխան: Կազմակերպությունը Պետական ռեգիստրի կողմից գրանցվել է 2003թ. հուլիսի 31-ին:

Կամակերպության գործունեության հիմնական ռազմավարական ուղղություններն են.

- Աղետների կառավարում
- Բնակչության տեղաշարժ
- Առաջին օգնություն
- Որոնում ծառայություն
- Սոցիալ-առողջապահություն
- Երիտասարդների հիմնախնդիրներին  արձագանք
- Մարդասիրական արժեքների տարածում:

Կազմակերպության առաքելությունն է նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ, նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են ազգաբնակչության խոցելիության պատճառ դառնալ, ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց::

Կազմակերպությունը 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում իրականացրել է «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ծրագրերի հզորացում» ծրագիրը, որը ֆինանսավորում է Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարությունը ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի աջակցությամբ: Ծրագրի նպատակներն են.

- Երևանում և ՀՀ մարզերում տուբերկուլոզային հիվանդներին սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում,
- խարանի ու խտրականության նվազեցում,
- տուբերկուլոզով հիվանդների բուժման հետևողականության բարձրացում:

Ծրագրի շրջանակներում Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումները ներառում են.

- Երևանում և ՀՀ մարզերում կամավորների, սոցիալական աշխատողների և հոգեբանների կողմից սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում ամբուլատոր փուլում գտնվող տուբերկուլոզով հիվանդներին և նրանց ընտանիքի անդամներին,
- Բուժման ցածր հետևողականություն ունեցող տուբերկուլոզով հիվանդներին անհատական մասնագիտական խորհրդատվության տրամադրում՝ բուժման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով,
- Համայնքային առաջնորդների, բուժաշխատողների հետ համագործակցության շրջանակներում համայնքային հանդիպումների կազմակերպում՝ ուղղված իրազեկվածության բարձրացմանը,
- Բարեհաջող ելքով բուժումն ավարտած տուբերկուլոզով հիվանդների համար վերաժննդի միջոցառման կազմակերպում:

Կազմակերպության՝ Ծրագրի իրականացման մեջ ներգրավված աշխատակիցների քանակը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 11 մարդ:

Կազմակերպության գրանցված և գործունեության հասցեն է ՀՀ, ք. Երևան, 0015, Պարոնյան 21/1 շենք:

## 2 Էական հաշվապահական քաղաքականություն

### 2.1 Համապատասխանություն

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի համաձայն: Հաշվապահական հաշվառման այս հիմունքի շրջանակներում ֆինանսավորումը ճանաչվում է ստացման պահին, իսկ ծախսերը վճարման պահին: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացվել են 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

### 2.2 Գործառնական և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Կազմակերպության գործառնական արժույթը:

Սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների համար:

## 3 Ստացված ֆինանսավորում

2021թ. հոկտեմբերի 1-ին կնքված № ARM-C-MOH-ARCS-2021/4-2022 դրամաշնորհային պայմանագրի և դրա 2022թ. հունիսի 22-ին կնքված Համաձայնագիր 1-ի շրջանակներում «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ծրագրերի հզորացում» ծրագրի իրականացման համար հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպությունը ստացել է 40,679,671.40 դրամ ֆինանսավորում: Ընթացիկ ժամանակաշրջանում այս պայմանագրի շրջանակներում ստացվել է 160,000 դրամ համաֆինանսավորում: Ստացված միջոցների մնացորդների վրա հաշվետու ժամանակաշրջանում հաշվեգրվել և վճարվել է համապատասխանաբար 66,342.50 դրամ և 9.80 դրամ տոկոսային եկամուտ:

## 4 Դրամական միջոցների մնացորդ

2021թ. հոկտեմբերի 1-ին կնքված № ARM-C-MOH-ARCS-2021/4-2022 դրամաշնորհային պայմանագրի 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չծախսված դրամաշնորհային միջոցների 678,027.20 ՀՀ դրամ և համաֆինանսավորման միջոցների 1,314.80 դրամ վերջնական մնացորդները փոխանցվել են 2022թ.-ի հաշվետու տարի:

Հաշվետվու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վերոնշյալ դրամաշնորհային պայմանագրի շրջանակներում չծախսված գումարի դրամաշնորհային միջոցների մնացորդը կազմում է 2,644,113.30 դրամ, իսկ համաֆինանսավորման միջոցների մնացորդը՝ 1,324.60 դրամ: 2023թ. հունվարի 19-ին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Կազմակերպության միջև կնքված փոխադարձ հաշվարկների ակտով 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության մոտ առկա մնացորդը համարվել է 2022թ. դեկտեմբերի 29-ին կողմերի միջև կնքված № ARM-C-MOH-ARCS-2023 պայմանագրի սկզբնական մնացորդ: Համաֆինանսավորման միջոցների մնացորդը իրենից ներկայացնում է բանկային հաշվի դրական մնացորդի վրա հաշվեգրված տոկոսային եկամուտը, որը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա է պետական բյուջեից համաֆինանսավորման գումարների համար բացված բանկային հաշվում:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 07.08.2023 14:44